ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԸ ԿՈՒՆԵՆԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐ

Նոր ուսումնական տարվա նորամուծություններից է այն, որ սեպտեմբերից դպրոցներում կվերականգնվեն բժշկական կաբինետները: Նախագիծը համատեղ իրականացնում են Վրաստանի կրության եւ առողջապահության նախարարությունները:

Ինչպես տեղեկացրին կրթության նախարարությունից, դպրոցական բժիշկները իրականացնելու են առողջապահության ամրանդման միջոցառումների ծրագրումը ու դրանց կատարումը, նպաստելու են քրոնիկական հիվանդությունների ու վնասվածքների, վարակիչ հիվանդությունների տարածման կանխմանը: Ծնողներին ժամանակին տեղեկատվություն են փոխանցելու այս կամ այն հիվանդության կանխման եւ բուժման մասին: Հանձնարարականներ են փոխանցելու դպրոցի տնօրինությանն ու դասղեկներին, երեխաների առողջապահական վիճակի մասին: Ակտիվորեն ներգրավվելու են նաեւ հիվանդությունների կանխմանն ուղղված պատվաստումների իրականացման գործընթացին:

Սկզբում վերոնշյալ նախագիծը պիլոտային բնույթ է կրելու եւ այն Վրաստանի մասշտաբով իրականացվելու է 100 հանրակրթական դպրոցներում:

Կրթության նախարարության պարզաբանմամբ, արդեն նոր ուսումնական տարում կսկսվի Թբիլիսիում եւ տարածաշրջաններում գործող 100 դպրոցներում բժշկական կաբինետների կարգավորումը: Հաջորդ փուլում նախագիծը կընդգրկի հանրակրթական մյուս կրթօջախները:

Դպրոցների բժշկական կաբինետները հագեցված կլինեն անհրաժեշտ գույքով, դեղորայքով եւ մյուս սարքավորումներով: Նախագծի իրականացման նպատակով, կրթության նախարարությունը կատարելու է պիլոտային դպրոցների ընտրությունը, դրանք ապահովելու է ենթակառույցներով եւ նյութատեխնիկական համապատասխան բազայով:

Ինչ վերաբերում է դպրոցական բժիշկների ընտրությանն ու նախապատրաստմանը, ապա դա իրականացնելու է Վրաստանի առողջապահության նախարարությունը:

«Վերջին ամիսներին կրթության նախարարության հետ միասին, մենք մշակեցինք դպրոցների, բժիշկների եւ բուժքույրերի այսպես կոչված որակավորման չափորոշիչները: Արդեն այսօր շատ բժիշկներ բավարարում են վերոնշյալ չափանիշներին եւ վերապատրաստման կարիք չունեն, թեպետ մտադիր ենք դպրոցական բժիշկներին վերապահել լրացուցիչ գործառույթներ, որոնք չեն սահմանափակվում միայն անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերմամբ»,- հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն:

Իր հերթին, հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ դպրոցական բժիշկները կընտրվեն մրցութային կարգով: «Մրցույթին կմասնակցեն բժշկական որոշակի փորձ ունեցող եւ ներկայումս որպես ընտանեկան բժիշկներ աշխատող մասնագետները, մանկաբույժները, ովքեր ունեն համապատասխան հավաստագիր: Բժիշկներին մրցութային կարգով համատեղ կընտրեն առողջապահության եւ կրթության նախարարությունները: Սկզբնական փուլում մրցույթը հայտարարվել է պիլոտային 100 դպրոցների համար բժիշկների եւ բուժքույրերի ընտրության նպատակով: Նախագծի հաջողության դեպքում, բնականաբար, մրցութային պայմաններն ու ընտրվող բժիշկների թիվը կփոխվի»,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

Անդրադառնալով դպրոցական բժիշկներին վերապահվող գործառույթների թեմային, հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի տնօրենը նշեց, որ դպրոցական բժիշկներին կվերապահվեն ինչպես անհետաձգելի օգնության ցուցաբերում, այնպես էլ՝ հանրակրթական որոշակի գործառույթներ: Մասնավորապես, բժիշկը ծրագրելու եւ իրականացնելու է առանձին հիվանդությունների դեմ պատվաստումների գործընթացը, ապահովելու է պատվաստման գործընթացի բոլոր աշակերտների ներգրավումը: Դպրոցական բժիշկը ապահովելու է նաեւ դպրոցներում հիգիենայի եւ սանիտարական նորմերի պահպանումը»,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:»

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՆՈՒՆՈՒ ԳԱԲՈՒՆԻԱՆ «ՀԱՅԱՐՏԱՆԸ»

Վրաստանի վաստակավոր արտիստուհի, երգահան Նունու Գաբունիան, Թբիլիսիի «Հայարտուն» կենտրոնում հանդիպեց մայրաքաղաքի երաժշտասեր հասարակայնության ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա էին ճանաչված երգահանի սաները, նրանց ծնողները, հյուրեր:

Միջոցառումը վարող Աննա Պողոսովան ներկայացրեց ճանաչված երգահանի համառոտ կենսագրությունը, նրա ստեղծագործությունը՝ հայտնի երգերը, մանկական գործերը, կինոյի եւ անիմացիոն ֆիլմերի համար գրված երաժշտությունը: Արժեւորվեց Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության նախաձեռնությամբ, 2012 թվականի նոյեմբերին Թբիլիսիի համերգային դահլիճի առջեւ բացված Վրաստանի վաստակավոր արտիստուհի, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի Նունու Գաբունիայի աստղը:

Հանրաճանաչ երգահանը, շնորհակալության խոսքեր ուղղելով «Հայարտուն» կենտրոնի համակարգող ղեկավարությանը այս հանդիպման համար, պատմեց հայ ժողովրդի, Հայաստանի երաժշտասեր հասարակայնության հետ իր կապերի մասին: Նա կարեւորեց այն բարեկամական հարաբերությունները, որ այսօր էլ շարունակվում են փոխադարձ սիրով եւ նվիրվածությամբ:

Այնուհետեւ հնչեցին երգեր Նունու Գաբունիայի եւ ուրիշ երգահանների երգացանկից: Ներկաների առանձնահատուկ ընդունելությանն արժանացան բազմաթիվ մրցույթների դափնեկիր Լիզա Կրասնոռուդսկայայի կողմից դասական եւ էստրադային, վրացերեն, ռուսերեն, հայերեն եւ այլ լեզուներով երգերի հիանալի կատարումները:

Հուզառատ եւ գեղեցիկ կատարմամբ հանդես եկավ հանրաճանաչ երգահանի թոռնուհին՝ Նինուցա Բեդիաշվիլին: Բարեկամության շնչով միջոցառումը հագեցած էր նաեւ հայերեն երգերով, որոնք հնչեցին մենակատարներ Անի Ղուշչյանի եւ Աննա Պողոսովայի կատարմամբ:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, իր օրհնությունը հղելով ներկաներին, բարձր գնահատեց երգահան Նունու Գաբունիայի եւ նրա սաների մասնակցությամբ կայացած գողտրիկ երեկոն եւ այն անվանեց հայ-վրացական մշակութային բարեկամության եւս մեկ էջ:

Երեկոն անցավ ջերմ, բարեկամական մթնոլորտում:

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՌՈԲԵՐՏ ԷԼԻԲԵԿՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

«Արքունի ճաշակով Ռոբերտ էլիբեկյանի արվեստը այնքա՜ն պակասում էր մեր կերպարվեստին...»:
Մինաս Ավետիսյան

Հայաստանի ժողովրդական նկարիչ 73-ամյա Ռոբերտ էլիբեկյանը ծնվել է Թբիլիսիում: Նա Վրաստանի մշակույթի վաստակավոր գործիչ, ժամանակին, մինչեւ Երեւան տեղափոխվելը, 1960-ական թվականներին Թբիլիսիի Ստ.Շահումյանի անվան պետհայդրամայի թատրոնի տնօրեն Վաղարշակ էլիբեկյանի որդին է, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Հենրի էլիբեկյանի եղբայրը:

Ավարտել է Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը: Նրա արդիաշունչ գործերի կերպարները հիմնականում կանայք են, թատրոնի դերասաններ: Հորինվածքներում ի հայտ են եկել արդուզարդի, կենցաղային իրերի մանրամասեր, թատերական դեկորներ եւ այլն: Դիմանկարներին բնորոշ են հոգեբանական նուրբ շերտերի բացահայտումը, քնարականությունը: Հեղինակ է թատերական ձեւավորումների (Լյուդվիգ Մինկուսի «Դոն Կիխոտ», Էդգար Հովհաննիսյանի «Անտունի», Արամ Խաչատրյանի «Հավերժություն» բալետներ, Լեոնկավալլոյի «Պայացներ» օպերա, բոլորը՝ Երեւանի օպերայի եւ բալետի թատրոն եւ այլն):

ժամանակի շրջագծից:

Կերպարվեստի ասպարեզ մտնելով 1960-ական թվականների սկզբներին՝ Ռ.էլիբեկյանը շատ չանցած ճանաչվում է որպես մի ինքնատիպ երեւույթ՝ համարձակորեն դիմելով կերտման արդիական ձեւամիջոցներին եւ հավատարիմ մնալով համաշխարհային դասական ռեալիզմի ոգուն ու առանձնահատկություններին: Էլիբեկյանը վրձնի այն վարպետներից է, որոնց ստեղծագործական խղճի ձայնը հաջողության փառքից ավելի բարձր է հնչում: Իսկ ստեղծագործողի նրա աշխարհը հակադրությունն է առօրյա գործողությանը, աշխարհ, ուր ամեն ինչ չափվում է միայն գեղեցկության չափանիշով: Կործանման դատապարտված վաղանցիկ տեսիլքների անիրական աշխարհը հանձինս էլիբեկյանական կտավների, փրկվելով վերահաս կործանումից եւ փոխվելով տեսողական համակարգի, դառնում է երջանկության պահերի անմոռաց մարմնացում: Այս իմաստով էլիբեկյանի արվեստը հատկորոշվում է կնոջ գեղեցկության առեղծվածի վերծանման, բացահայտման, ցուցադրման աստվածաշնորհ վարպետությամբ: Կին էակի պատկերի մեկնությունը էլիբեկյանի վրձնի նախասիրած հիմնական ժանրային աշխարհն է, որով եւ արտացոլվում է նրա հոգու ողջ էությունը: Կինը նրա կտավներում՝ լինի պատուհանի մոտ կամ մի շքեղ կամարի ներքո, ընդմիշտ դուրս գալու, ազատագրվելու պատգամ է հաղորդում դիտողին, որը զուտ էլիբեկյանական վրձնի յուրահատուկ խորքն է: Նրա կերպարները հավերժ կանացիության, անաղարտ գեղեցկության ու հմայքի մարմնացում են, որոնցից ասես լույսն է անդրադարձվում, որոնք միշտ ջահել են ու երջանիկ, միմյանց արտաքուստ նման, սակայն էությամբ անսահմանորեն տարբեր:

Այսպես, պատկերելով դիմանկարներ, գեղեցիկ պարուհիների հարդարանք բեմելից առաջ, բեմին կամ բեմեզրին, կրկեսային տեսարաններ, մարդկային լուռ ու խորհրդավոր հանդիպումներ, մտերիմ զրույցներ, բիբլիական մոտիվների գունանկարչական մնջախաղ այս կամ այն թեմայով՝ էլիբեկյանը ստեղծում է հանդիսանքի իր աշխարհը, ուր իշխում է երեւակայության կենդանի տոնախաղը, թռիչքը, ստեղծագործելու հավերժ ու մշտապես նորացող արդիական եւ ավանդական բերկրանքը: Կան կտավներ էլ, որ նման են կյանքին, որով էլիբեկյանը ցանկանում է, որ կյանքն էլ նման լինի դրանց, եւ դիտողն ասես հաճույքով կիսում է նկարչի այդ ցանկությունը: Եվ այստեղ նույնպես էլիբեկյանի երանգապնակից ծնվող կտավները մերթ եթերային ու թափանցիկ թեթեւություն ունեն՝ ասես նման լինեն ջրի վրայով սահող հովի քնքշության, մերթ ճոխ ու բազմագույն են՝ լույսի եւ տարածության խտացումով ու ծավալվող գույների երանավետ խորությամբ, գունապատկերների նրբազգաց հարաբերություններով էլիբեկյանի արվեստում որոշակի տեղ ունի նաեւ դիմանկարի ժանրը, ուր փայլուն գեղանկարչությունը զուգորդվում է կերպարի հավաստիությանն ու ազգային ավանդույթները կրող ընդհանրացումների ձգտումին: Թատրոնին մի առանձնահատուկ տեղ է հատկացնում Ռ.էլիբեկյանի դերը ստեղծագործական տեսահորիզոնում: Եվ քանզի էլիբեկյանի արվեստի ակունքները մեծապես ազդվում են օպերայի ու թատրոնի աշխարհից, ուստի արվեստագետը, այս ասպարեզում էլ կրկին փորձություններն ու գայթակղությունները հաղթահարած, որպես մի առանձնահատուկ ստեղծագործող, կատարել է բազում նրբաճաշակ բեմանկարչական ձեւավորումներ:

Էլիբեկյանական վրձնի պատկերած թատրոն-նկարի առջեւ այնպես է թվում, թե էլիբեկյանը կամ օպերային թատրոնին հավետ խենթի պես սիրահարված գեղանկարիչ է, եւ կամ էլ թատերագիր ու էլի խենթի պես սիրահարված գեղանկարչությանը, որտեղ այդ չխունացող հմայքից ակամա մոռացվում է կեղծիքն ու սուտը, տգեղն ու չարը եւ, հափշտակվելով ու կախարդվելով տեսածից, վերանալով տխուր առօրյայից, ասես փոխադրվում ես չքնաղ կախարդանքի, հեքիաթի ու երանավետ հույզերի անօրինակ հաճույքի մեջ եւ լիովին վայելում ու ըմբոշխնում այն:

Ոճական շրջանները, հաջորդելով միմյանց, տարրալուծվելով, առաջ են մղում հեղինակի վրձնարվեստի հնարավորության սահմանները եւ ընդմիշտ ապացուցում, թե որքա՜ն բարդ ու դժվար է ժամանակակից արվեստում ունենալ ուրույն ոճ ու ոճամտածողություն եւ կրել այդ բախտը: Էլիբեկյանի անընդհատ վեհացող ու բյուրեղացող, սակայն անցյալից երբեք չկտրվող արվեստը մեր վերածնված հայրենիքի մշակութային նոր վերելքի դրսեւորումներից է:

ՎԱՆԻԿ ՍԱՆԹՐՅԱՆ

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

²èàÔæ²ä²ÐàôÂÚàôÜ

ՔՐՏԻՆՔԸ՝ ԲՈՒԺԻՉ ԳՈՐԾՈՆ

Շատ եմ քրտնում, նույնիսկ անհարմարության որոշակի զգայում եմ ապրում դրա համար: Թեպետ վերջերս իմացա, որ քրտնքի միջոցով կարելի է որոշակի հիվանդություններ բուժել: Որքանո՞վ է դա հավաստի:

Ս.Գեւորգյան

Թբիլիսի

Իրոք, քրտնքի միջոցով հնարավոր կլինի հիվանդություններ բուժել:

Էդինբուրգի համալսարանի գիտնականները պարզել են, որ մարդու քրտինքը կարող է դառնալ բնական հակաբիոտիկ, որի միջոցով կարելի է պայքարել տուբերկուլյոզի եւ տարբեր սուպեր բակտերիաների դեմ:

Բանն այն է, որ մարդու օրգանիզմում առկա դերմիցիտին սպիտակուցը ակտիվանում է քրտնելու ընթացքում: Հետազոտողները եզրակացնում են, որ այս մոլեկուլն օգտագործելով, կարելի է արդյունավետ դեղամիջոցներ ստանալ: Իսկ ընդհանուր առմամբ բնության մեջ կա 1700 բիոտիկ:

Նշենք, որ տուբերկուլյոզը (պալարախտ, թոքախտ) քրոնիկ վարակիչ հիվանդություն է: Առավել հաճախ հիվանդանում են դեռահասները եւ ծերերը, քանի որ նրանց օրգանիզմում վարակի հանդեպ դիմադրողականությունը ցածր է:

Ü²Ê²Î²ÜÊàôØ

ԵԹԵ ԿԱՆ ՄՐՍԱԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Առանչնակի զգայուն եմ փոփոխական եղանակների նկատմամբ: Հարբուխն ու հազը մշտական ուղեկիցներս են: Չգիտեմ՝ ինչպե՞ս վարվել:

Տ.ՍԻՄՈՆՅԱՆ

Բոլնիսի

Շատ հեղուկ ընդունելն անհրաժեշտ է օրգանիզմից վնասակար նյութերը դուրս մղելու համար:

Ուժեղ հարբուխի դեպքում ընդունեք սխտորի կամ սոխի հյութ՝ մեղրով. 4-6 կաթիլ՝ 1 ոչ լիքը թեյի գդալ մեղրին: Պահեք բերանում, դանդաղ ծծեք:

Հարբուխն ավելի քիչ կանհանգստացնի, եթե ձեռքերը 10 րոպեով դնեք տաք ջրի մեջ, որի ջերմաստիճանն աստիճանաբար պետք է բարձրացնել 35°C-ից մինչեւ 45°C:

Եթե մարմնի ջերմաստիճանը 39°C-ից ցածր է, ցանկալի չէ ջերմությունն իջեցնող դեղերի ընդունումը, քանի որ այդ ջերմությունը վարակի նկատմամբ օրգանիզմի պաշտպանական արձագանքն է:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՐԵՎԱՅԻՆ ԱԿՆՈՑԻ ԽՆԱՄՔԸ

Պլաստիկ ապակուց քերծվածքը կարելի է վերացնել փայլեցնող մածուկով, որն օգտագործվում է ատամնաբուժության եւ ժամագործության մեջ: Որպեսզի քերծվածքներ ընդհանրապես չառաջանան, պետք է ակնոցը պահել պնակի մեջ, որն այն կպաշտպանի տարբեր վնասվածքներից:

Պարբերաբար ապակիները պետք է մաքրել փափուկ, խոնավ անձեռոցիկով: Ակնոցի ապակու վրա մաշկի ճարպային եւ քրտնքից մնացած հետքերը անհրաժեշտ է՝ որքան հնարավոր է շուտ հանել, հակառակ դեպքում ապակիները կարող են խամրել: Ակնոցի թուլացած պտուտակները պետք է զգուշորեն ամրացնել:

ԻՆՉՈ՞Վ Է ՕԳՏԱԿԱՐ ՇՈՎԻ ԱՂԸ

Շովի աղի ստացման մեխանիզմը բավականին պարզ է: Տաք երկրներում ծովի ջուրը գոլորշիացնում են արեւի տակ՝ բնական եղանակով, ավելի ցուրտ կլիմայով երկրներում գոլորշիացումը կատարվում է հատուկ գուռերի մեջ: Չնայած ծովի աղի մեջ նույնպես կա նատրիումի քլորիդ, ինչպես եւ սովորական քարաղի մեջ, այն իր քիմիական կազմով բավականին տարբերվում է քարաղից: Դրա մեջ օրգանիզմին անհրաժեշտ մեծ թվով միկրոտարրեր կան՝ կալիում, սելեն, յոդ, կալցիում եւ այլն: Այն դուրս է մղում նատրիումը թույլ չտալով, որ օրգանիզմում ջրի ավելցուկ մնա: Յոդն անհրաժեշտ է վահանաձեւ գեղձի նորմալ աշխատանքի համար: Կալցիումն անհրաժեշտ է ոսկրային հյուսվածքներին, սելենը պայքարում է ազատ ռադիկալների դեմ, որոնք առողջ բջիջները դարձնում են պաթոգեն:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՍՈՒԼՏ. ՏԵՍԱԿՆԵՐԸ

Առաջին օգնությունը

Ինսուլտը այն հիվանդությունն է, որը պահանջում է շտապ բժշկական օգնություն:

Եթե նկատում եք ինսուլտին բնորոշ նշաններ, ձեր հարազատների կամ անծամբ ձեզ մոտ, առաջին հերթին արագ կանչեք շտապ օգնություն: Մինչ շտապ օգնության հասնելը, որպես առաջին օգնություն անհրաժեշտ է՝

1.Հիվանդին պառկեցնել մահճակալին, գլխի եւ ուսագոտու տակ դնել բարձ, այնպես, որ հիվանդի դիրքը մահճակալի նկատմամբ կազմի 30° անկյունից ոչ ավելի: Դեմքին եւ կրծքին ցանել սառը ջուր: Գլխին դնել սառույց կամ սառը ջրով թրջած սրբիչ:

2.Արհեստական ատամնաշարը (պրոթեզ) հանել, արձակել կոճակները, գոտին: Ոտքերին դնել տաք ջրով ջեռակ:

3. Բացել պատուհանը, որ թարմ օդ լինի սենյակում:

4.Փսխելու դեպքում, շտապ մաքրել բերանի խոռոչը թանզիֆով կամ պարզապես մաքուր թաշկինակով՝ հիվանդի գլուխը թեքելով կողքի:

5.Հիվանդին ոչ մի դեղորայք չտալ մինչեւ բժշկի գալը: Պարզապես նրա կողքին եղեք եւ հանգստացրեք:

Ինսուլտը բուժվում է միայն հիվանդանոցում: Սակայն հիշեք, որ բուժումից հետո գալիս է նաեւ մի շատ կարեւոր փուլ, երբ մարդը դուրս է գրվում հիվանդանոցից:

Խնամք ինսուլտից հետո

Հիվանդանոցից դուրս գրվելուց հետո հիվանդի հարազատների խնդիրն է թույլ չտալ կրկնակի ինսուլտ եւ օգնել հիվանդին՝ որքան հնարավոր է արագ վերականգնել առողջությունը:

Շատ կարեւոր է ճիշտ կահավորել հիվանդի մահճակալը: Մահճակալի գլխի մասը պետք է մի փոքր բարձր լինի, որ հեշտ լինի նստելը՝ հենվելով բարձերին:

Ներքնակն անպայման պետք է լինի կոշտ ու հարթ, վերմակը՝ բավականին թեթեւ եւ միաժամանակ տաք, անկողնային սպիտակեղենը՝ մաքուր, որ պառկելախոցեր չառաջանան: Սենյակը պետք

է լինի տաք, սակայն պարտադիր է կանոնավոր օդափոխությունը. այդ ընթացքում հիվանդին ավելի տաք ծածկոցներով ծածկեք:

Հիվանդի մոտ դրեք զանգ կամ պարզապես զանգակներ, որ ցանկացած պահի հարազատներից որեւէ մեկին կանչի:

Եթե մարդը ի վիճակի է ինքնուրույն անկողնուց վեր կենալ, ապա հոգ տարեք, որ նրա մահճակալի մոտ լինի հարմարավետ բազկաթոռ կամ սովորական աթոռ, որին հնարավոր կլինի հեշտությամբ հենվել կամ նստել: Սենյակը առավելագույնս պետք է ազատ լինի հատկապես այն իրերից, որոնք կարող են վնասվածքների առաջացման պատճառ լինել: Օրինակ՝ սուր անկյուններով կողապահարաններ, ապակե իրեր, տաքացնող սարքեր եւ այլն:

Ինսուլտ տարած մարդը պետք է անընդհատ զգա շրջապատի ուշադրությունը եւ հոգատարությունը, որն օգնում է արագ վերականգնվել: Իհարկե, հայտնի է, որ տարած ինսուլտից հետո վերականգնողական պրոցեսները շատ դանդաղ են ընթանում. դա հաճախ նմանեցնում են նորածնի զարգացմանը կյանքի առաջին ամիսներին եւ տարիներին:

Դիետան ինսուլտից հետո

Ինսուլտից հետո վերականգնման փուլում կարեւոր նշանակություն ունի սնունդը: Մարդը, ում մոտ կա վերջույթների ֆունկցիայի խանգարում, խոսքի եւ հիշողության թուլացում, անհանգիստ եւ գրգռված վիճակ, կարիք ունի հավասարակշռված, վիտամիններով եւ կալիումով հարուստ սննդի, ինչպես նաեւ կենդանական ճարպերի խիստ սահմանափակման: Բացի այդ, հաշվի առնելով մարդու շարժունակության անկումը եւ այտուցների առաջացման հավանականությունը, հիշեք նաեւ այն մասին, որ ընդունած սնունդը պետք է օրգանիզմից հեռացնի շատ հեղուկ, դրա հետ միասին՝ նաեւ թափոններ:

(Շարունակելի)



ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է:

ԵՂԻՇԵ
V դար
Հայ պատմիչ

Երբ տարիքի ծանր բեռից կռանում ենք եւ աղեղվում, ձանձրալի ենք դառնում արդեն, եւ բոլորն են մեզնից նեղվում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՃԱՎՃԱՎԱՁԵ
(1786-1846)
Վրաց բանաստեղծ

Մարդը երկրային բնության բարձրագույն արդյունքն է: Բայց բնության գանձերը վայելելու համար մարդը պետք է առողջ, ուժեղ եւ խելացի լինի:

Ի.ՊԱՎԼՈՎ
(1849-1936)
Ռուս ֆիզիոլոգ, հոգեբան

Ոչ խելամիտ զգացումներին վստահելը կոպիտ հոգիների հատկությունն է:

ՀԵՐԱԿԼԻՏ
(մ.թ.ա.544-մ.թ.ա.483)
Անտիկ դարաշրջանի հույն փիլիսոփա

Արդարացիության մեծագույն արգասիքը անվրդովությունն է:

ԷՊԻԿՈՒՐ
(մ.թ.ա.341-մ.թ.ա.270)
Հռոմեացի փիլիսոփա

Ուսուցիչը, որը կարողանում է օժտել իր սաներին աշխատանքում ուրախություն գտնելու ընդունակությամբ, պետք է պսակվի դափնիներով:

ԷԼԲԵՐԹ ՀԱԲԱՐԴ
(1856-1915)
Ամերիկացի գրող

Աշխատանքը բուժիչ բալասան է. նա աղբյուր է առաքինությունների:

ՀԵՐԴԵՐ
(1744-1803)
Գերմանացի փիլիսոփա, գրող, լուսավորիչ

Բարի գործ ես արել՝ քաշվիր մի անվտանգ տեղ, որպեսզի երախտագիտության հարվածող ալիքը քեզ չկպչի:

Ի.ՂԱԶԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸à†Ü°ð

** Կինը՝ ամուսնուն.*

- Ի՞նչ ես կարծում գուցե իրար դավաճանենք, որ մի քիչ աշխուժանա մեր տխուր ամուսնական կյանքը:

- Անհիմաստ է, ես արդեն մի քանի անգամ փորձել եմ:

** - Որ մեծանամ, երազում եմ աստղ դառնալ:*

- Եթե ուզում ես աստղ դառնալ՝ նստիր տոնածառին:

** - Էլի ամեն օր սարսափ ֆիլմեր ես նայում:*

- Չէ, նորությունների թողարկումն ավելի սարսափելի է:

** - Մայրի՛կ, դպրոցից գալիս ընկա ցեխը,- ասաց Արմենը:*

- Ինչպես, նոր շալվարով:

- Այո՛: Այնքան արագ կատարվեց, որ չհասցրի շալվարս հանեմ:

** Հարբեցողը գալիս է բժշկի.*

- Խմում եք:

- Չեմ հրաժարվի:

** - Ինչո՞ւ էիր պարապմունքից շուտ գնցել,- հարցնում է ուսուցչուհին աշակերտին:*

- Ես, որ բոլորից ուշ էի եկել, դրա համար էլ շուտ գնացի:

** - Մայրի՛կ, հիշում ես այն ճենապակե սկահակը, որ ասում էիր՝ մեր գերդաստանում սերնդից սերունդ է փոխանցվել:*

- Իհարկե, իսկ ինչ է պատահել:

- Իմ սերունդն այն կոտրեց:

** - Ինչպե՞ս ես սովորում,- հարցնում է հյուրը տղային:*

- Չգիտեմ:

- Իսկ ինչպիսի՞ թվանշաններ ես ստանում:

- Անարդարացի:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՅՑԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հուլիսի 6-12-ը պաշտոնական այցով գտնվում էր Հարավային Ամերիկայում:

Այցի շրջանակներում՝ Հայաստանի նախագահը հուլիսի 6-8-ը եղավ Արգենտինայի Հանրապետությունում, հուլիսի 8-10-ը՝ Ուրուգվայի Արևելյան Հանրապետությունում, իսկ հուլիսի 10-12-ը՝ Չիլիի Հանրապետությունում:

Սերժ Սարգսյանը հանդիպումներ ունեցավ հիշյալ երկրների բարձրագույն ղեկավարության հետ: Հանդիպումներում քննարկվեցին երկկողմ հարաբերությունների ամրապնդման, ինչպես նաեւ բազմակողմ փոխգործակցության զարգացման հնարավորություններին վերաբերող հարցեր: Այցի արդյունքներով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ոլորտներում այդ երկրների հետ Հայաստանի համագործակցության զարգացմանն ու խորացմանն ուղղված փաստաթղթերի ստորագրման արարողություններ կատարվեցին:

Այցի շրջանակներում նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպումներ ունեցավ նաեւ Արգենտինայի, Ուրուգվայի եւ Չիլիի հայ համայնքների ներկայացուցիչների հետ, ծանոթացավ այդ երկրներում հայկական կառույցների ծավալած գործունեությանը:

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍՈՒՄ ԿԱՅԱԾԱՎ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հարավային Ամերիկա կատարած պաշտոնական այցի շրջանակներում, Արգենտինայում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, հուլիսի 8-ին, Բուենոս Այրես քաղաքային կառավարության նախարարների խորհրդի նախագահ Օռասիո Լառետայի, տեղական ինքնակառավարման մարմինների եւ արգենտինահայ համայնքի ներկայացուցիչների հետ ներկա է գտնվել Բուենոս Այրեսի Պալերմո թաղամասում Հայոց ցեղասպանության թանգարանի հիմնարկեքի արարողությանը:

Հիմնարկեքի հուշատախտակի օրհնությունից հետո Բուենոս Այրեսի քաղաքային կառավարության նախարարների խորհրդի նախագահ Օռասիո Լառետան եւ Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը բացել են այն:

Հայոց ցեղասպանության թանգարանի հիմնարկեքի կապակցությամբ Հայաստանի նախագահն արարողությանը ելույթ է ունեցել մասնակիցների առջեւ: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, Բուենոս Այրեսի քաղաքային կառավարության 2014թ. մայիսի 6-ի որոշմամբ, մայրաքաղաքի Պալերմո թաղամասում անվճար տարածք է հատկացվել Հայոց ցեղասպանության թանգարանի կառուցման համար:

ՔՆՆԱՐԿՎԵՑ ԵՏՄ-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Հուլիսի 11-ին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը Սոչիում հանդիպում ունեցավ Ռուսաստանի իր պաշտոնակցի՝ Դմիտրի Մեդվեդեւի հետ:



Հանդիպմանը կառավարությունների ղեկավարները քննարկեցին հայ-ռուսական համագործակցության հարցերն առեւտրատնտեսական, ներդրումային, արդյունաբերական, էներգետիկական, ենթակառուցվածքային, հումանիտար եւ մշակութային բնագավառներում: Առանձնակի քննարկման թեմա էր Հայաստանի մասնակցությունը Եվրասիական տնտեսական ինտեգրացմանը:

Այցի շրջանակներում Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը եղավ Սոչիի օլիմպիական ավանում՝ ծանոթացավ այնտեղ իրականացված աշխատանքներին:

Հովիկ Աբրահամյանի գլխավորած կառավարական պատվիրակության կազմում են Հայաստանի փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը, ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանը, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանը, առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը, Հայաստանի կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ Գուրգեն Դումանյանը, պաշտոնատար այլ անձինք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, Ռուսաստանի Դաշնություն կատարած պաշտոնական այցի շրջանակներում, հանդիպում ունեցավ ՌԴ Պետդումայի նախագահ Սերգեյ Նարիշկինի, ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության Խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի հետ:

Գալուստ Սահակյանի եւ ՌԴ Պետդումայի նախագահ Սերգեյ Նարիշկինի առանձնազրույցից հետո հանդիպումը շարունակվել է ընդլայնված կազմով: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի եւս:

Հայաստանի Աժ նախագահի գլխավորած պատվիրակության անդամները Մոսկվայի Ալեքսանդրյան այգում ծաղկեպսակ եւ ծաղիկներ են դրել Անհայտ զինվորի հուշակոթողին:

ԿԱՅԱՑԱՎ «ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՓԱԿՄԱՆ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծաղկաձորի «Արի տուն» ճամբարում հուլիսի 4-ին կայացավ Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրի 2-րդ փուլի փակման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը մասնակցեցին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, այլ պաշտոնատար անձինք:

Իսկ հուլիսի 7-ին մեկնարկեց Հայաստանի սփյուռքի նախարարության «Արի տուն» 2014թ. ծրագրի երրորդ փուլը:

«Արի տուն» 2014թ. ծրագրի երրորդ փուլին մասնակցելու համար հայրենիք են ժամանել 170 պատանի եւ երիտասարդ ԱՄՆ-ից, ՌԴ-ից, Լեհաստանից, Բելգիայից, Շվեդիայից, Գերմանիայից, Իսպանիայից, Իսրայելից, Ուկրաինայից, Վրաստանից:

Ծրագրի մասնակիցները 9 օրվա ընթացքում կծանոթանան Հայաստանի պատմական եւ արդի տեսարժան վայրերին, կունենան բազմաբնույթ հանդիպումներ պետական, հասարակական եւ մշակութային գործիչների հետ, հայրենագիտության դասեր կառնեն Հայրենիքում, կսովորեն ազգային պարեր եւ երգեր: Ծրագրի վերջում ճամբարային 5 օրերը մասնակիցները կանցկացնեն Ծաղկաձորում: Երրորդ փուլը կավարտվի հուլիսի 19-ին:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ՝ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԵՆ ԹԲԻԼԻՍՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ

Հայաստանի Տավուշի մարզում բացվել է «Զիկատար» բնապահպանական կենտրոն:

Հայաստանի բնապահպանության նախարարության աջակցությամբ անցկացվող էկոլոգիական-հայրենագիտական ուսումնահետազոտական ճամբարում իրենց ակտիվ հանգիստն են անցկացնում «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կազմակերպած «Էկոտուր 2014» ամենամյա չորրորդ բաց ստուգատեսի մրցանակակիրները՝ Արցախի, Թբիլիսիի, Երեւանի, Հայաստանի մյուս մարզերի եւ կրթահամալիրի մի քանի դպրոցներից:

Նախարարության ենթակայությամբ գործող «Զիկատար» բնապահպանական ուսումնական կենտրոնի աջակցությամբ էկոճամբարում կազմակերպվում են արշավներ հատուկ պահպանվող տարածքի անտառային հատվածներ եւ պատմամշակութային հուշարձաններ:

ԿԱՆԽԱԳԾՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Երեւանում մեկնարկել է «Անվտանգության նոր մարտահրավերները եւ ՆԱՏՕ-ն» թեմայով քննարկումը, որի նպատակն է ներկայացնել Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները եւ համագործակցության նոր ուղիներ ու մարտահրավերներ վեր հանել:

«ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի հարաբերությունները կանոնակարգվել են փոխադարձ ընկալմամբ եւ Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների նկատմամբ հարգանքով: Այլ միությունների հետ համագործակցության առումով Հայաստանն ազատ է եւ ՀԱՊԿ-ին անդամակցության վերաբերյալ ՆԱՏՕ-ում մտահոգված չենք: Հայկական զորքերը մասնակցում են ՆԱՏՕ-ի խաղաղապահ առաքելություններին՝ տարբեր երկրներում. դա ամենամեծ ներդրումն է, որը երկիրը կարող է ունենալ, ինչի համար շնորհակալ ենք»,- հայտարարեց ՆԱՏՕ-ի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի համակարգող Դեսպինա Աֆենտուլին:

ԽԱՂԱՂԱՐԱՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է

Խաղաղապահ ոլորտում Հայաստանի կարեւորագույն նպատակներից մեկն էլ խաղաղապահ գործողությունների աշխարհագրության ընդլայնումն է: Դրա իրականացման նպատակով աշնանը հայ խաղաղապահները կմեկնեն Լիբանան՝ այնտեղ իրականացնելու խաղաղապահ առաքելություն եւ նպաստելու միջազգային անվտանգությանը: Այդ մասին հայտարարեց Հայաստանի ԱԳՆ սպառազինությունների եւ միջազգային անվտանգության վերահսկողության վարչության պետ Սամվել Մկրտչյանը եւ հավելեց, որ իրավական առումով հարցերը կարգավորված են, համաձայնեցման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը արդեն ստորագրվել են թե՛ Իտալիայում, թե՛ ՄԱԿ-ի գրասենյակում, եւ, ամենայն հավանականությամբ, աշնանը հայ խաղաղապահները կմեկնեն Լիբանան:

ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԱՃԵԼ ԵՆ

Հայաստանի պետական բյուջեի եկամուտները 2014 թվականի հունվար-մայիսին կազմել են 433,4 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 414,8 մլրդ դրամ, որոնք, համապատասխանաբար, 79,7 տոկոսով եւ 73,6 տոկոսով ապահովել են Հայաստանի կառավարության առաջին կիսամյակի ծրագրի կատարումը: Հունվար-մայիս ամիսներին ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում առաջին կիսամյակում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը: Անցյալ տարվա հունվար-մայիսի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 6 տոկոսով, որն ապահովվել է հիմնականում հարկային եկամուտների եւ այլ եկամուտների գծով մուտքերի աճի հաշվին:

Այս տարվա հունվար-մայիսին, Հայաստանի պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 9,8 տոկոսով, ինչը պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով:

ԿԱՐՏՈՖԻԼԸ ԱՐՏԱՀԱՆՎՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆ

Հայաստանի Արարատի մարզում շարունակվում է կարտոֆիլի համատարած բերքահավաքը: Մարզի մասնագիտացված կարտոֆիլագործական համայնքները ստացել են առատ բերք, որն իրացնում են ներքին շուկայում, միաժամանակ իրականացվում է արտահանում ՌԴ՝ վրացի եւ հայ գործարարների միջոցով: Այս տարի Հայաստանի կառավարության կողմից չեռնարկած միջոցառումների շնորհիվ հնարավոր եղավ խուսափել կարտոֆիլի եւ լոլիկի ականակիրից: Վաղ գարնանը տեղադրվեցին 1500 հատ ֆերամոնային թակարդներ (2 հա հաշվարկով՝ 1 հատ), ինչը կատարում է ազդակի դեր: Ունենալով նախորդ տարվա «դառը փորձը»՝ հողագործներն այս տարի ճիշտ ժամանակին սկսեցին պայքարը, ինչի շնորհիվ ստացան որակյալ բերք:

Արարատի մարզում այս տարի կատարվել է 800 հա կարտոֆիլի ցանք: Միջին բերքատվությունը մարզում 32 տոննա է:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒԼԻՍ

13.07.2014. Տոն Սուրբ Աստվածածնի տուփի գյուտի

14.07.2014. Սուրբ Կալիստրատոսի եւ 49 վկաների եւ Ղունկիանոս քահանայի հիշատակության օր

15.07.2014. Հիշատակ Զաքարիա մարգարեի

17.07.2014. Եղիսե մարգարեի հիշատակության օր

19.07.2014. Քրիստոսի 12 առաքյալների եւ Սուրբ Պողոս 13-րդ առաքյալի հիշատակության օրը

Հիսուս Քրիստոսի ընտրած 12 առաքյալները Քրիստոսի աշակերտներն ու Քրիստոսի վարդապետության առաջին տարածողներն էին, հարուցյալ Քրիստոսի վկաները: Պետրոս, Անդրեաս, Հակոբոս, Հովհաննես, Մատթեոս, Բարդուղիմեոս, Փիլիպոս, Թովմաս, Թադեոս, Հակոբոս (Ալփյան), Շմավոն (Կանանացի) եւ Հուդա առաքյալներն էին նրանք, նրանցից վերջինը եղավ Հիսուսի մատնիչը: Հետագայում 12 առաքյալների շարքում Հուդայի փոխարեն ընտրվեց Մատաթիա առաքյալը:

Քրիստոսի պատվիրանների ամենամեծ քարոզիչներից է Սուրբ Պողոս առաքյալը, ում քրիստոնյա եկեղեցին ճանաչում է 13-րդ առաքյալ:

20.07.2014. Բարեկենդան Վարդավառի պահոց

Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության՝ Վարդավառի տոնին նախորդող շաբաթապահքը հայ եկեղեցում կոչվում է Վարդավառի պահք: Պահքի վերջին շաբաթ օրը նավակատիք է, այսինքն՝ այդ օրը թույլատրվում է ձկնեղեն եւ կաթնեղեն օգտագործել:

ՏԱՐԱԴՐԱՄ

ՎՐԱՑԱԿԱՆ ԼԱՐԻՆ ՈՒՆԵՑԱՎ ԻՐ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ

Վրաստանի ազգային արժույթն ունի իր խորհրդանշանը: Թբիլիսիում կայացած շնորհանդեսին Վրաստանի ազգային բանկի նախագահ Գիորգի Քադագիձեն հասարակայնությանը ներկայացրեց այն նմուշը, որը հաղթել է մրցույթում, եւ դրա հեղինակին՝ նկարիչ-խեցեգործ Մալխազ Շվելիձեին:

Լարիի խորհրդանշանը հիմնված է վրացերենի «Ლ» (ლ) կամարաձեւ տառի գծանկարչական ուրվապատկերի վրա: Համաշխարհային պրակտիկային համապատասխան, տարբեր դեպքերում արժույթի անվանման առաջին խորհրդանշանի վրա քաշված է լինում մեկ կամ երկու զուգահեռագիծ: Ազգային բանկում հայտարարել են, որ վրացական փողի՝ լարիի խորհրդանշանի ստեղծումը կնպաստի ազգային արժույթի ժողովրդականացմանը ինչպես Վրաստանում, այնպես էլ՝ նրա սահմաններից դուրս, հասարակության մեջ դրա ճանաչելիությանը եւ, համապատասխանաբար, դրականորեն կանդրադառնա վերջինիս վարկի վրա:

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 100

ԱՆԾԿԱԾՎԵԾ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՆԻՍՏԸ

«Հայարտուն» կենտրոնում, նախագահությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, կայացավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող Վրաստանի հանձնախմբի հերթական նիստը:

Նիստի աշխատանքին մասնակցում էին հանձնախմբի անդամները Թբիլիսիից, Բաթումիից, Սամցխե-Ջավախեթիից, Քվեմո Քարթլիից: Ներկաներին բաժանվեց պատրաստված թղթածրար, որը ներառում էր հանձնախմբի անդամների կողմից կազմված աշխատանքային ծրագրերը, որոնք ուղղված են Հայոց ցեղասպանության փաստի մասին Վրաստանի հասարակայնության տեղեկացվածության ապահովմանը եւ ապագա միջոցառումների մասին նախագծերին:

Նիստին ներկա էր Վրաստանում Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Վահագն Աֆյանը:

ԳԻՍԱՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋ

Վրաստանի մշակույթի գործիչները իշխանություններից պահանջում են պահպանել նկարչուհի եւ նովելների հեղինակ Գայանե Խաչատրյանի ժառանգությունը:

Վրաստանի մշակույթի գործիչները, այդ թվում՝ էլդար Շենգելաիան, Գոգի Դոլիձե, Անզոր Էրքոմաիշվիլին, Թինաթին Կլդիաշվիլին, Մերաբ Կոկոչաշվիլին, Գիա Բուգաձեն եւ ուրիշներ, նամակով դիմել են Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն, գլխավոր դատախազ Գիորգի Բադաշվիլուն եւ մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Գուրամ Օդիշարիային:

Մշակույթի գործիչները պահանջում են բացել Գայանե Խաչատրյանի թանգարան, ինչպես նաեւ ստեղծել կառավարական հանձնաժողով, որը կուսումնասիրի նրա ժառանգության հետ կապված հարցերը եւ հիմք կդնի նկարչուհու թանգարանի ստեղծման համար: Նամակը ստորագրել են մշակույթի 19 գործիչներ:

ՆՈՐՈՒԹ

Gmail-ՈՒՄ ԱՎԵԼԱՑՎԵԼ Է ՎՐԱՑԵՐԵՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԸ

Gmail-ում ավելացվել են 13 նոր լեզուներ, այդ թվում՝ վրացերենն ու հայերենը: Այդ մասին ասված է փոստային սերվիսում տարածված հայտարարության մեջ: Այսպիսով, Gmail-ի փոստը, որը մատչելի էր 58 լեզուների համար, հուլիսի 7-ից լեզուների թիվը հասավ 71-ի: Ինչպես տեղեկացնում է Google-ը, դա թույլ կտա ընդգրկել համաշխարհային ինտերնետ համացանց լսարանի 94 տոկոսը եւ հեռու չէ այն ժամանակը, երբ Gmail-ում հնարավոր կլինի օգտագործել բոլոր լեզուները:

Նոր սերվիսում բացի վրացերենից ու հայերենից, մնացած 11 լեզուների թվին են պատկանում ադրբեջաներենը, աֆրիկաանսը, գալերենը, զուլու, ֆրանսերենը (Կանադա), չիներենը (Հոնկոնգ), կխմերենը, լաոսերենը, մոնղոլերենը, նեապոլիտերենը եւ սինգալերենը:

Յուրաքանչյուր լեզուն ունի իր նրբությունը, ուստի Google-ը տեղեկացնում է, որ սերտ համագործակցություն է իրականացվել լինգվիստների հետ ճիշտ տարբերակի ընտրության գործում:

ԲՐԱԶԻԼԻԱ - 2014

ՉԱՐՄԱՆԱԼԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՍՏ ՄՈՒՆԴԻԱԼԸ

ՎԱՂԸ՝ ՀՈՒԼԻՍԻ 13-ԻՆ, ՉԵՄՊԻՈՆԻ ՏԻՏՂՈՍԸ ԿՎԻՃԱՐԿԵՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵՎ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ

Իր ընթացքում շարունակում է զարմանք հարուցել Բրազիլիայում անցկացվող ֆուտբոլի աշխարհի առաջնությունը: Թե՛ խմբային եւ թե՛ պլեյ-օֆֆերի հանդիպումները, կիսաեզրափակիչը ներառյալ, ընդհանուր նկարագրից բացառություն չկազմեցին: Եթե առաջին անակնկալը խմբային մրցաշարում աշխարհի չեմպիոն Իսպանիայի, Պորտուգալիայի (համապատասխանաբար՝ 1:5 հաշվով Հոլանդիայից եւ 0:4 հաշվով Գերմանիայից) խոշոր հաշվով պարտություններն էին, ապա կիսաեզրափակչում նույն գերմանացիներից 1:7 հաշվով բրազիլացիների կործանարար անկումը դժվար էր պատկերացնել անգամ մղձավանջային երազում:

Ինչեւիցե, այսօր առաջնության տերերը, հոլանդացիների հետ միասին, ովքեր կիսաեզրափակչում 11 մետրանոց հարվածներով գիջեցին Արգենտինայի թիմին, բրոնզե մեդալների համար կանցկացնեն «սփոփանքի» հանդիպում, իսկ մունդիալի գլխավոր գործող անձինք՝ Գերմանիայի եւ Արգենտինայի հավաքականները՝ վաղը, հուլիսի 13-ին, հանրահայտ Մարականա խաղադաշտում կվիճարկեն չեմպիոնի տիտղոսը:

Եթե հաղթեն գերմանացիները, ապա դա կլինի նրանց չորրորդ ոսկեբեր առաջնությունը, իսկ արգենտինացիների հաղթանակի դեպքում վերջիններս կնշեն իրենց երրորդ ոսկե մունդիալը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Խթան, ներգործություն: 6.Լադա ...: 9.Նամաճիճու: 10.Դերասանի դերի համար նախատեսված իր: 12. ... անել, մտածել: 13.Գարեջրի հումք: 17.Հունաստանի կարեւոր քաղաքը: 19.Ազդող, ներգործող: 21.Վրաստանին բարեկամ երկիր: 22.Պեպեն, ցան դեմքի կամ մարմնի վրա: 24.Ծովի ...: 21.Դեղի աման: 29.Թոքերի, շնչառության հետ կապված հիվանդություն: 32.Թբիլիսահայ աշուղ, բանաստեղծ Սայաթ-Նովա. «... կուգաս, ղարիբ բլբուլ»: 34.Ուղեւորի բեռը: 35.Իգական անուն: 36.Ձնջոց, շորի կտոր: 37.Արփի, արեգակ: 38.Որակազուրկ, խոտան: 41.Թշնամի, ոչ բարեկամ: 43.«... Իգորի գնդի մասին»: 45.Էշի եւ ձիու խառնուրդը: 46.Կաթոլիկ քահանա: 48.Ռիկի Տիկի ...: 49.Սափրվելու մազերը: 31.Հեռախոսի ...: 52.«Նեղ» բառի հականիշը: 56.Եղեւնու պտուղը: 58.Անձնական դերանուն: 59.Արդար, շիտակ, ճշմարիտ: 61.Ամերիկահայ երգչուհի ... Սարգսյան: 62.Անարատ, առանց թերության: 63.Գրականության մեջ՝ այստեղ: 64.... Մերկուրի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ամառային ...: 3.Շտապ, ոչ դանդաղ: 4.Վրաստանի դրամական միավորը: 5.Թբիլիսիով հոսող գետ: 7.Հայ պատմիչ: 8.Ինքնամոռաց, բնազդով, իր կամքից անկախ: 11.Վրաստանի նախագահի ... ասուլիսը: 14.Հանդարտ, ոչ արագահոս: 15.Գյուղացու զգեստ: 16.Ուղիղ, ոչ խորդուբորդ: 18.... ով, արագ: 20.Գիշեր ու ...: 23. ... Մատատա: 25.Անբարոյական, բարոյազուրկ: 26.Չորս անգամ: 27.Մարտարվեստի տեսակ: 28.Ավտոմեքենայի մակնիշ: 29.Վերջածանցի տեսակ: 30.Ամենայն հայոց բանաստեղծուհի ... Կապուտիկյան: 31.Երկար բարձ: 33.Հայ ֆիդայի Աղբյուր ...: 39.Մազերում ապրող «գազան»: 40.Լամպի ներսի մետաղալարը: 42.Հայկական ճաշատեսակ: 44.«... Իզաուրան» (սերիալ): 47. ... Աքա: 49.Կրքա..., կենսա...: 50.... առ Աստված: 53.Վիրահայ երիտասարդ գրող ... Գրիգորյան: 54.Հերոսուհի «Անցյալի ստվերներ» սերիալում: 55.Հագուստի մաս: 57.Հայ բռնցքամարտիկ ... Մունչյան: 60.Ծիրանի, դեղձի ...:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Ստալին: 8.Սուվորով: 9.Անվանի: 10.Ալարկոտ: 14.Ակնամոմ: 15.Միդի: 17.Բերետ: 18.Ճերմակել: 22.Դարա: 23.Ոդիսեւս: 26.Քիսո: 27.Փոխանակում: 32.Սթիվի: 33.Աջիկա: 35.Լոկ: 36.Դարպասապահ: 41.Առակ: 42.Լիտ: 44.Հաստատ: 45.Կարինե: 46.Ավան: 47.Լուս: 48.Անմայր: 49.Սադիստ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Դուկլա: 2.Կոտրն: 3.Սոդոմ: 5.Տանձ: 6.Լրագիր: 7.Նաիրիտ: 11.Ակորդ: 12.Կապար: 13.Տոմե: 15.Մելիք: 16.Դեռեւս: 18.Ճամփորդ: 19.Մախաթ: 20.Կաքավ: 21.Լոռու: 24.Սիպիլ: 25.Սոխակ: 28.Խսիր: 29.Նիկա: 30.Կիթառ: 31.Մարականա: 34.Կոսինուս: 37.Ատամն: 38.Պիտնա: 39.Սատար: 40.Պակաս: 42.Լիլի: 43.Տեստ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445